# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի «Աղավնաձորի Զ.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ի «Պատմություն» առարկայի / 18դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի միջոցով: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձեւ 1)

-մեկ լուսանկար 3x4 չափի

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

- անձը հաստատող փաստաթուղթ

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձեւ 5)

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճանների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 21 -ից նոյեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի նոյեմբերի 5-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Աղավնաձորի Զ.Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077706701, 0-77930210 հեռախոսահամարներով: